


479



19.10

Վ. Տ. - Ա. Բ Ր.

I.

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ

II.

ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ



Pro captu lectoris habent
sua fata libelli.
Terenz.



Բաղու, տպ. «Արամազդ».
1910.

2002

801
S-37

uy

Վ. Տ. - Ա. Բ. Բ.

I.

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ

II.

ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ



Pro capto lectoris habent
sua fata libelli.

Terenz.

Բազում, տպ. «Արամազդ».

1910.



4
39
8

Դրականութեան *) այն ճիւղը, որ յայտնի է գեղեցիկ գրականութիւն անունով,—հինգ ազատ և գեղեցիկ արուեստներից **) (գեղարուեստ) մինն է կազմում:

Ոչ մի արուեստ այնքան բազմակողմանի և լայն ծաւալ չունի, ինչպէս բանաստեղծութիւնը՝ պօէզիան. նրա նիւթն է ամեն առարկայ, ամեն գաղափար. նա իր մէջ պարփակում է և միւս արուեստները ու այդ պատճառով կարող է կոչուել արուեստների արուեստ: Ուստի բանաստեղծը պէտք է բազմակողմանի կրթութիւն ունենայ. նա պէտք է ծանօթ լինի ոչ միայն լեզուաբանութեանը, այլ և պատմութիւնը, փիլիսոփայութիւնը, բնական գիտութիւնները նրա համար օտար չը պիտի լինեն, որովհետեւ բանաստեղծը, ինչպէս և բոլոր գեղարուեստագէտները մարդկութեան ուսուցիչներն—գաստիարակներն են: «Բանաստեղծները ոչ միայն զրոյց անողներ են, այլև նրանց բարձր կոչումն է լինել քարոզիչ, երգիչ, մարգարէ, հովիւ մտաւոր աշխարհի, մխիթարող և քաւող, ճակատագիր ցուցնող և ժողովրդի առաջին մարտիկ»: (Carrière). Շիլլերը իր խօսքը բանաստեղծներին ուղղելով, բացականչում

*) Ծագում է գիր բառից. լատիներէն Litera—տառ, գիր: Literatur—գրականութիւն:

**) Բանաստեղծութիւն (պօէզիա), նկարչութիւն, երաժշտութիւն (մուզիկա), քանդակագործութիւն և ճարտարապետութիւն:

է. «Ձեր ձեռքն է տրուած մարդկութեան պատիւն. դրա հետ դուք խիստ զգոյշ վարուեցէք. նա խոնարհւում է ձեզ հետ միասին, նա բարձրանում է ձեզ հետ միասին»:

Բանաստեղծական իւրաքանչիւր գրուածք լաւ ըմբռնելու, նրանից որոշ բաւականութիւն ստանալու և այդ ստեղծագործութիւնը անսխալ գնահատելու համար՝ անհրաժեշտ է ծանօթ լինել բանաստեղծական գրուածքների էութեան, նրանց տեսակների և կանոնների հետ:

Բանաստեղծութիւնը կամ պօէզիան *) բաժանւում է հետևեալ ճիւղերի.

- I. Էպիկական պօէզիա.
- II. { Լիրիկական պօէզիա.
- III. { Դրօշակտիկական պօէզիա.
- IV. Դրամատիկական պօէզիա:

Այս գրքոյը համառօտ և ամփոփ կերպով գաղափար է տալիս ա) լիրիկական (քնարերգական) պօէզիայի և բ) դրօշակտիկական (վարդապետական) պօէզիայի մասին: Մենք ջանացել ենք ամբողջ նիւթը կարելոյն չափ ամփոփել այս սուղ էջերում՝ տալով միայն այն, ինչ որ էական է:

*) Յունարէն՝ ποίειν—յօրինել, ստեղծագործել:

ԲՈՎԸՆԳԸ ԿՈՒԹԻՒՆ.

I. Լիրիկական պօէզիա.

Ընդհանուր տեսութիւն: Լիրիկական ոտանաւորների տեսակները: Ա. Մեղմ զգացողութիւն արայայտող ոտանաւորներ. Երգ: Ժողովրդական երգ: Գրական երգ: Բ. Զօրեղ զգացողութիւն արայայտող ոտանաւորներ. Օդա: Հիմն: Դիթիրամբուս: Էլեգիա (եղերերգութիւն):

II. Դրօշակտիկական պօէզիա.

Ընդհանուր տեսութիւն: Ա. Սիւբօլական դիդակտիկ. Ֆարել (առակ առասպելական): Պարաբել (առակ նմանութեան): Ալլեգորիա (այլարանութիւն): Հանելուկ: Բ. Տենդենցիօզ դիդակտիկ. Սատիրա: Տրաւեստիա և պարօդիա: Հումօրիստական բանաստեղծութիւն: Գ. Բուն դիդակտիկ. Իդէալական լիրիկ: Կուլտուրական պատմական բանաստեղծութիւն: Էպիգրամ: Պրիամել: Քսենիա: Գնօմէ: Պօէտիկական էպիստիլ: Ուսուցողական-վարդապետական բանաստեղծութիւն:

Պարտք եմ համարում շնորհակալութիւնս յայտնել Վէննայի Միլիթարեան Հայրերին, որոնք թէ այս և թէ իմ միւս աշխատանքները («Էպիկական պօէզիա», «Դրամատիկական պօէզիա») կատարելու համար, սիրալիւր կերպով թոյլ տուին ինձ իրենց գրադարանից օգտուելու և աջակցելին ինձ՝ բանաստեղծական գրուածքների տեսակներից մի քանիսին հայերէն ճիշտ անունները տալու:

Վ. Տ.-Աբր.

I.

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՊՅԷԶԻԱ

(Քնարերգութիւն)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Անունը.— Լիրիկ,— ծագում է յունական lyra (քնար) լարագործիքից։ Հին ժամանակ, Յունաստանում, երգեցողութիւնը ընթանում էր քնարի հնչիւնների տակ։ Իսկ Գերմանիայում, միջին դարերում, քնարին փոխարինեց տաւիղը, որի նուագածութեան ներքոյ երգում էին լիրիկական ստանաւորներ։

Խմաստը.— Լիրիկը (քնարերգութիւնը) սուրբիեկտիւ զգացմունքի պօէզիան է կամ զգացմունքի սուրբիեկտիւ արտայայտութիւնը։ Քնարերգութեան աստեղծը իր երգի մէջ դնում է իր ամբողջ հոգին. նա ինքը, նրա հոգեկան խորը զգացմունքը՝ ոտանաւորի էութիւնն են կազմում։ Նա իր ամբողջ հոգով և սրտով աշխարհը պէտք է ըմբռնել և արտայայտել կարողանայ։ Սակայն բանաստեղծի զգացմունքը և նրա ընթերցողի զգացմունքն է, ընթերցողը նրա հետ միասին ուրախանում է, նրա հետ միասին բողոքում,

լացում։ Քնարերգուն պէտք է իսկութեամբ և մեծ ընդունակութեամբ մեզ տայ իր այն տպաւորութիւնը, որ նա ստանում է գեղեցիկը դիտելիս։ Նրա հոգեկան կեանքում պիտի հարմոսիան թագաւորէ, որպէս զի նա իդէալականը անբիծ ներկայացնել կարողանայ։ Լիրիկական բանաստեղծը կամ քնարերգուն երգում է.

«Գարուն և սէր, երանելի, ոսկէ դար,
Ազատութիւն, միշտ անվեհեր քաջութիւն,
Ազնւութիւն, սրբութիւն:
Նա երգում է այն ամենը, ինչ որ քաղցր է,
Ինչ որ մարդու սրտին թրթիւ,
Յուզումներ է պատճառում.
Նա երգում է այն ամենը, ինչ որ վեհ է,
Ինչ որ մարդու վեհութիւն է պարգևում»:
(L. Uhland).

«Ինչպէս որ յանկարծ արցունքն է ցայտում
մարդու աչքերեց,
Այնպէս էլ յանկարծ երգն է դուրս ժայթքում
սրտի խորքերից»:
(H. Heine).

«Քնարերգութեան աստեղծի վեհ արուեստն է արտայայտել ընդհանուրը, տիեզերային, հասարակաց նիւտ ու կաց. նա իր խորը զգացմունքով պիտի կեանք տայ, վերստեղծել կարենայ, կամ իր հարազատ մատչելի դրոշմն երգում պիտ

դնի մեծ վարպետութեամբ, որ ամեն ընթերցող իր դէմքն նրանում հիացած տեսնի»:

(Geibel).

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՈՏԱՆԱԼՈՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Լիրիկական ոտանաւորները, նայած թէ ինչ չափով զգացմունք են պարունակում,—պարզ և հասարակ թէ՛ բուն, մոլեգին բանաստեղծական աւիւն են արտայայտում,—բաժանում են հետեւեալ տեսակներին.

Ա. Մեղմ զգացողութիւն արտայայտող ոտանաւորներ,

Բ. Զօրեղ զգացողութիւն արտայայտող ոտանաւորներ:

Ա. Մեղմ զգացողութիւն արտայայտող ոտանաւորներ.

Ե Ր Գ.

Իմաստը.—Իւրաքանչիւր լիրիկական ոտանաւոր, որ զգացմունքի ուրոյն տրամադրութիւնն է արտայայտում և որը յատկապէս պէտք է երգուի,—կոչւում է երգ (նուագ): Ամեն ազգ ունի իր երգը. ժողովուրդները ստեղծել են բազմաթիւ երգեր, որոնք և կոչւում են ժողովրդական երգեր: Սակայն այն ամենը, ինչ որ երգւում է ժողովրդի կամ անհատների կողմից,—դրանք բոլորը երգեր չեն: Երբեմն սխալ

հասկացողութեամբ էպիկական ոտանաւորներին երգ անունն ենք տալիս, ինչպէս, օրինակ, նիբելունգների երգերը:

Երգից պահանջւում է՝

1) Պարզութիւն եւ գեղեցկութիւն. դրանցում պէտք է պայմանաւորուի իդէայի ճշմարտութիւնը, զգացմունքի բնական արտայայտութիւնը և խորութիւնը, ջերմութիւնը, լեզուի ճկունութիւնն ու սիրունութիւնը:

2) Վանկերի կանոնաւորութիւն. այդ անհրաժեշտ է, որովհետեւ ոտանաւորը պիտի երգուի: Սովորաբար երգը ունենում է չորս վանկ, սակայն կարելի է և աւելի կամ պակաս վանկերով յօրինել:

3) Երգելիութիւն. ոտանաւորը երգելի է այն ժամանակ, երբ նրա լեզուն, ակցենտն ու բանաստեղծութիւնը հնչւում է այնպէս զեղզեղելի, բնական, ժողովրդական, որ կարդալիս մեզ թւում է, թէ մեւօգիս ենք լսում. նրանում մուգիկա պէտք է լինի: «Նա հնչւում է որպէս երգ, նա ձգտում է երգւելու, նա պէտք է երգուի»: Որքան երգելի է ոտանաւորը, այնքան նշանաւոր է երգը ստեղծագործող բանաստեղծը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ.

Ծագումը.—Ժողովրդական երգը մի ընդհանուր ստեղծագործութիւն է որեւէ ժողովրդի, երբ երգը երգւում է և փոփոխութեան ենթարկ-

ւում իրեն՝ ժողովրդի կողմից: Այդպիսի երգերը, դարերից ի վեր, ժառանգաբար ստացուել և պահպանուել են և ոչ ոք չէ ճանաչում դրանց հեղինակներին: «Իսկական ժողովրդական երգը անանուն է և կարիք էլ չունի դրան. ոչ թէ մէկն է այդ յօրինել, այլ շատերը. և եթէ այդ մէկ մարդ է յօրինել, — շատերն են փոփոխել, աւելացրել կամ պակասացրել ու դարձրել ընդհանուրի սեպհականութիւն»: Ժողովրդական երգերը անթիւ են: Այդ յօրինել և պահպանել է իւրաքանչիւր ժողովուրդ, դրանց մէջ դնելով իր ուրոյն դրոշմը: Մի ժողովրդի հարագատ, ժողովրդական երգերից կարելի է ճանաչել նրա քաղաքակրթութեան աստիճանը, նրա հոգեկան աշխարհը, նիստ ու կացը, անցեալն ու ներկայ վիճակը, ընդունակութիւններն ու ձգտումները:

Բոլշակոյակոյսիւնը. — Ժողովրդական երգում կարելի է գտնել ամբողջ կեանքը՝ իր բոլոր կողմերով. կատակ, լրջութիւն, արիութիւն, մաքուր և հաւատարիմ սէր, խորը վիշտ, թախիծ, ատելութիւն, ցասում... Կայտառութիւնն ու թարմութիւնը ժողովրդական երգի էութիւնն են կազմում. դրանք մեզ ուրախութիւն են պատճառում, ինչպէս մի սիրուն հոտաւետ փնջիկ՝ վայրի ծաղիկներից: Ժողովրդական երգը երբեք քնքոյշիկ, քաղցրիկ ու սանտիմենտալ չէ: Ոչ ոքի համար չէ յօրինած ժողովրդական երգը, և սակայն այդ երգում է ամենքի կողմից, թէ

զարգացած և թէ անզարգացած մարդկանց կողմից: Մեղօգիան պարզ է, հասարակ, բայց խորը և զգացմունքով լեցուն:

Նորագոյն կոմպոնիստները ժողովրդական շատ երգեր յարմարեցրել են երաժշտութեան մօդերն եղանակների: Այդ, այնուամենայնիւ, սխալ է, այդպէս չպէտք է լինի: Երաժշտական արուեստական փոփոխութիւնները ժողովրդական երգի իսկական տպաւորութիւնը կարող են փչացնել: Ով ժողովրդական երգը իր ամբողջ պարզութեամբ չի լսում, նա անկարող է հասկանալ դրա միտքը:

Բոլոր մեծ բանաստեղծները ժողովրդական երգի զով աղբիւրից ճաշակել են: Ինքը ժողովրդական երգը մի կարկաչուն, զովաշունչ առուակ է, որի մասին երգւում է՝ «Ով որ խմէ այս առուակից, երիտասարդ կը մնայ և չի ծերանայ»: Գէօտէն ասում է. «Ժողովրդական երգերը իսկական, ճշմարիտ պօէզիան են կազմում. դրանք մի զարմանալի հրապոյր ունին նոյն իսկ մեզ համար, մեզ, որ զարգացման աւելի բարձր աստիճանի վրա ենք գտնուում, — մի այնպիսի հրապոյր, ինչպիսին երիտասարդ կեանքի յիշողութիւնն է՝ զառամեալ ծերունու համար: *)

*) Հերգերը մեծ ծառայութիւն է մատուցել, ի մի հաւաքելով բոլոր ազգերի ժողովրդական երգերը, որոնք հրատարակել է այս խորագրի տակ՝ «Ժողովուրդների ձայները երգերում»:

Տեսակները.—Ժողովրդական երգերը կարելի է բաժանել երկու կարգի. առաջինը՝ այսպէս ասած՝ ազնիւ տեսակի ժողովրդական երգեր, երկրորդը՝ դրա հակառակը՝ հասարակ տեսակի: Մինչդեռ առաջին տեսակի ժողովրդական երգերը անկեղծութեան, ազնւութեան, ժողովրդի պարզ զգացողութեան կնիքն են կրում,— երկրորդ տեսակի ժողովրդական երգերը իրենց ընդհանուր բովանդակութեամբ ներկայացնում են քստմենքի տեսարաններ, աւագակութիւն, եղբերագործութիւն: Այդ վերջին տեսակի երգերը երգւում են փողոցում՝ գոեհիկ դասակարգի կողմից և այդ պատճառով էլ ռամկական, գոեհիկ կամ փողոցային անունն են կրում: *)

Ժամանակակից ժողովրդական երգեր.— Ներկայումս ժողովրդի լաւ տարրերը զբաղւում են երգում են գեղարուեստորէն սիրուն երկեր և այդպիսով իսկական ժողովրդական երգերի զարգացումը կանգ է առնում կամ մոռացութեան տրւում: Պէտք է նկատ-

(«Stimmen der Völker in Liedern», von Herder): Այդ տեսակէտից դաստակի են նաև Բրենտանոյի, Ախիմ Փօն Արնիմի և ուրիշների երկերը:

*) Տեղն է յիշել, որ մեր կեանքում տասնեակ հազար օրինակներով վերջերս հրատարակւած և տարածւած «Արիւնի երգեր» ժողովածուն լեցուն է վերայիշեալ գոեհիկ, փողոցային, ընթերցողի զգացմունքը վիրաւորող «երգերով»:

տել, որ այդ՝ գեղարուեստորէն սիրուն երկերն ևս փողոցի սեպհականութիւն են դարձել ու երգւում են նաև ստորին դասակարգի կողմից: Սակայն երբեմն ծնւում են և իսկական ժողովրդական երգեր ու դրանց հետ տեղի է ունենում նոյնը, ինչ որ նախկին ժամանակներում, այսինքն՝ սկզբում դրանք երգւում են անհատների կողմից և յետոյ, հետզհետէ տարածւում, ամեն տեղ ընդունելութիւն գտնում և ամենքի սիրելին դառնում: Այդպիսի երգերի հեղինակները անձանաչ են մնում ժողովրդի մէջ:

ԳՐԱԿԱՆ ԵՐԳ.

Գրական երգի ծնողը ոչ թէ ամբողջ ժողովուրդն է, այլ նրա անգամներից մէկն ու մէկը: Այդպիսի երգը անհատի, բանաստեղծի անձնական զրոշմն է կրում: Գրական երգը չունի այն հասարակ, պարզ ձևը, ինչ որ յատուկ է ժողովրդական երգին. սակայն նա պէտք է ազատ լինի ամեն տեսակ արուեստական պաճուճանքներից, բռնազբօսիկ զարդարանքներից. գրական երգը, ինչպէս և ժողովրդական երգը, պէտք է բնական և ճշմարիտ զգացողութեան պատկերացումը լինի: (Օրինակ՝ «Ախ՝ տուէք ինձ քաղցր մի քուն»):

Բ. Ջօրեղ զգացողութիւն արժայատու ասանաւորներ.

Օ Դ Ա.

Անունը.—Օդա (յունարէն Oda) նշանակում է երգ, նուագ, տաղ:

Նմանութիւնը երգի եւ օդայի միջեւ.—Երգի մէջ բանաստեղծը արտայայտում է միայն որեւէ զգացողութիւն կամ արամադրութիւն, իսկ օդայում նա հիանում, սքանչանում է այն առարկայի կամ գաղափարի վեհութեամբ, որի մասին նա երգում է: Երգի լեզուն հասարակ է, պարզ, իսկ օդայինը խանդավառ, ոճը՝ բարձր: Երգի հեղինակ բանաստեղծը ամբողջովին սուբիեկտիւ է, իսկ օդայի հեղինակ բանաստեղծը՝ մասամբ եւ օբիեկտիւ:

Բովանդակութիւնը.—Աստուած, սէր, հայրենիք, բնութիւն, առաքինութիւն, բարեկամութիւն, անմահութիւն եւ այլն: (Օրինակ՝ Ալիշան, Սիւսանյան: Գերմանական գրականութեան մէջ օդայի ամենայայտնի հեղինակը համարւում է Կլօպշտօքը: (Klopstock).

Հ Ի Մ Ն.

Իմաստը.—Հիմն ասելով (յունարէն hymnos— մի այնպիսի երգ, որ գովաբանում, փառաբանում է. օրհներգ, շարական) սովորաբար հասկանում ենք կրօնական երգ, որը ամենամեծ հի-

ացմունքով, սքանչացումով Աստծուն, Քրիստոսին է փառաբանում: Միայն կրօնական բովանդակութիւնից կարելի է տարբերել հիմնը օդայից: Դրան կարելի է կրօնական օդա անուանել: (Օրինակ՝ Նարեկացին, շարականները): Օդան եւ կարող է հիմն անուանուել այն դէպքում, երբ նա փառաբանում է բնութեան ոյժերը, երեւոյթները այնպէս զօրեղ կերպով, ինչպէս հիմնի մէջ անձնաւորութիւններն են գովաբանուած:

Պատմական.—Եփրայեցիները այդպիսի մի հարուստ պօէզիա ունին սաղմոսում, որից եւ քրիստոնէական առաջին եկեղեցին ստեղծագործեց լատինական հիմները: Այդպիսի բանաստեղծութիւններ գտնում ենք նաեւ մեծ բանաստեղծների երկերում, որից ժողովուրդը փոխ ասած՝ երգում է, անուանելով դրանց ազգային հիմն, հայրենիքի հիմն, պատերազմի հիմն եւ այլն:

Որպէս օրինակ, կարող են ծառայել «Մարտիկոյը», «Մեր հայրենիքը», «Боже царя храни» եւ այլն:

ԴԻԹԻՐԱՄԲՈՒՍ.

(Dithyrambus—աւելնաշատ, վաւրուն երգ).

Անունը.—Դիթիրամբոս (ծագել է thriambos-ից, որ նշանակում է ցնծութեան երգ) աւելօժի աստծու՝ Բաքոսի մականունն է: Այդ աստծուն փառաբանելիս՝ երգեր էին երգում եւ

ահա այդտեղից առաջ եկաւ դիթիրամբուս անունը:

Տարբերութիւնը երգից.— Դիթիրամբուսի բովանդակութիւնը, ինչպէս և երգինը, կազմում է զգացմունքը: Միայն թէ դիթիրամբուսի մէջ զգացմունքը աւելի տխուր, վշտալից է, քան երգում: Նրա էութիւնն է կազմում մոլեգին արբեցութեան զգացմունքի կրքոտ սքանչացումը:

Է Լ Ե Գ Ի Ս.

(Եղերերգութիւն).

Տարբերութիւնը երգից.— Մինչդեռ երգի մէջ ներկան է պատկերացում, էլեգիայի մէջ (յունարէն elegos—վիշտ, տխրութեան երգ, մրմունջ) տիրապետող ոգին անցեալով և ապագայով է զբաղւում: Էլեգիան զուտ սուբիեկտիւ չէ, այլ աւելի շատ օբիեկտիւ, ինչպէս օդան:

Բոխանդակութիւնը.— Խորը վիշտը կամ թախիծը՝ անուշիկ, մելամաղձոտ, մեղմ զգացմունքի արտայայտութիւն. անյագ տենչը, սիրոյ մոլեգին, հրատապ անձկութիւնը, թոյլ բողոքը:

Ջգացմունքը էլեգիական բանաստեղծի կազմում է խառնուրդ, տարբեր զգացմունքների միաւորութիւն: Հակասութիւնը իրականութեան և իդէալի միջև, բանաստեղծին զցում է վշտի և թախծութեան ուղիւնը: Բանաստեղծը ճգնում է տիրանալ մի առարկայի կամ վիճակի, որը նա ձեռք բերել է կամենում կամ որը նա սկզբում ունեցել է և յետոյ այդ կորցրել: Նրա ֆանտա-

զիան փակում է նրա աչքերը, արգելում նրան տխուր ներկայի մասին խորհելու և նրա ուշադրութիւնը, միտքն ու զգացմունքը ուղղում դէպի երանելի անցեալ ժամանակները: Այդպիսով ամբողջ երջանկութիւնը, յիշողութիւնների միջոցով, նա մի անգամ ևս զգում է և ապրում: Եւ կամ նրա ֆանտազիան մղում է նրան դէպ ուրախ ապագան և նա վայելում է իր նախագագ երջանիկ կեանքը: Երկու դէպքում ևս նա զգում է միաժամանակ բերկրանք ու թախիծ: (Օրինակ՝ Շիլլերի «Իդէալներ», Թարգ. Գ. Բարխուդարեանի, «Մեղու հայաստանի» լրագրում):

Կան էլեգիաներ, որոնք միայն տրամուլթիւն, մրմունջներ են արտայայտում:

Պատկերացումը էլեգիայի՝ ալլեգորիկ (փոխաբերական) մտքով.— էլեգիան ներկայացնում է մի հանճար կամ յաւերժահարս, որը նստած, զրլուխը ձեռքին յենած, խիստ յուզուած, քնքոյշ թախիծով՝ տարուած է իր կորցրած վիճակի յիշողութիւններով: Մի՛ կիսով չափ կտրատուած, խորտակուած պսակ ծածկում է նրա դանդուր մագերի խոպուղիկները և մի թառամած ծաղկեփունջ՝ ընկած նրա գոգում՝ յիշեցնում է նրան անցած ուրախ օրերն ու դառն կորուստը: Հեռւում տեսանելի է մի շիրիմ, որի ետեւում նշմարւում է նոճանտառի միայն վերի մասը: Դրա մօտ գտնւում է մի բլրակ՝ ամբողջովին պա-

39



տած վարդենու նորաբողբոջ կոկոններով և արևածաղիկներով:

Նենի.— Լիբիկական բանաստեղծութեան այդ մի տեսակը մօտ ազգակից է էլեգիային: Նէնին (լատիներէն՝ naenia—տրտմութեան երգ, մըրմունջ) հռոմայեցիները երգում էին ի պատիւ ննջեցեալներին: Գերմանիայում դա մի փոքրիկ մըրմունջ, վշտակից երգ է կազմում: Շիւերը նէնին շատ յաճախ ներկայացնում է էլեգիայի էութեամբ և զբան էլեգիա անունը տալիս:

II

ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՊՕԷԶԻԱ

(Վարդապետական բանաստեղծութիւն).

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Անունը.— Դիդակտիկ՝ յունարէն didaskein— ուսուցանել. դիդակտիկական՝ նշանակում է ուսուցողական, կըթիչ, դաստիարակիչ: Ուրեմն դիդակտիկական բանաստեղծութիւն ասելով հասկացում է կըթողական, ուսուցանող, վարդապետական բանաստեղծութիւն:

Բովանդակութիւնը.— Դիդակտիկի նիւթը կազմում է մի վերացական, մտաւոր գաղափար, որը բանաստեղծի ֆանտազիայի շնորհիւ՝ խորիմաստ մտքերի և բուն զգացմունքների հանձարեղ արտայայտութեամբ փայլ է ստանում: Բարոյագիտական և փիլիսոփայական ճշմարտութիւններ, խորհրդածութիւններ և խորհուրդներ, խրատներ ու հրահանգներ մենք գտնում ենք դիդակտիկական բանաստեղծութեան մէջ: Սակայն այն դիդակտիկը, որի ամբողջ էութիւնը սահմանափակուած է միայն խրատական, կըթո-

դական մտքեր արտայայտելով, առանց բանաստեղծական աւելնի, չոր ու ցամաք, չէ՛ կարող պօէզիա կոչուել. այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տաղամուրթիւն, յանգամուրթիւն, զուրկ՝ զգացմունքից, զուրկ՝ իր ընթերցողին հիացնելու, սքանչացնելու կարողութիւնից:

Բաժանունը. — Դիգակտիկական պօէզիայի մէջ կարելի է տարբերել երեք տեսակի բանաստեղծութիւն.

ա. Միմբօլական դիգակտիկ.

բ. Տենդինցիօզ դիգակտիկ.

գ. Բուն դիտակտիկ:

Ա. Սիմբօլական դիգակտիկ.

Սիմբօլական կամ նշանակական բանաստեղծութիւն կոչում ենք այնպիսի մի գրուածք, որի մէջ բանաստեղծը զգայական է դարձնում մի միտք, մի իդէա՝ այդ ներկայացնելով մի ամբողջացրած պատկերում, որն է սիմբօլի (նշանակի) տակ:

Ֆ Ա Բ Ե Լ.

(Առակ առասպելական).

Անունը. — Ֆաբել (լատիներէն fabula, fari — խօսել, ասել) նշանակում է վճիռ, հանձարեղ խօսք: Միջին դարերում ֆաբելը կոչւում էր bispel — ճառ:

Իմաստը. — Ֆաբելը մի կարճ, հասարակ, հնարովի պատմութիւն է, որի մէջ կենդանիները, բոյսերն ու անշունչ առարկաները խօսողի դերում են պատկերացրած: Ֆաբելը պարունակում է բարոյական հասարակ և սարդ ճշմարտութիւններ: Նրա նպատակն է ցոյց տալ մարդկանց իրենց իսկական պատկերը:

Բովանդակորիւնը. — Ֆաբելը, որ մեծ մասամբ հասարակ ժողովրդի և մանկական աշխարհի համար է գրւում, պէտք է լինի կարճ, ամփոփ. նրա էութիւնն է պարզութիւնը, մանկական բնավորութիւնը. նա պէտք է մատչելի լինի թէ լեզուի և թէ պատկերացումների կողմից, որպէսզի նրանում շոշափուած բարոյական մտքերը հեշտութեամբ ըմբռնելի լինեն: Այն, ինչ որ ֆաբելն է սովորեցնում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ միմիայն բարոյագիտութիւն, մօրալ: Պատմութիւնը, պատմութեան ձեւը միայն միջոց են ներկայացնում՝ վերոյիշեալ նպատակի համար:

Առօրեայ կեանքի պարզ ճշմարտութիւնները գերազասում է արտայայտել կենդանիների միջոցով, իսկ աւելի բարձր մտքեր, ճշմարտութիւններ, մարդկային սրտի խորն յոյզեր չպէտք է տեղ գտնեն ֆաբելում: (Օրինակ՝ Քոիլովի առակները):

Ֆաբելի հայրն է համարւում Եզոբոս յոյնը: Լեսսինգը ֆաբելական գրականութեան մէջ փո-

փոխութիւն մտցնելով, մի էպօխա կազմեց, սակայն նա Եզոբոսի երկերը ընդունեց որպէս տիպար՝ Ֆաբելական գրուածքի:

Պ Ա Ր Ա Բ Ե Լ.

(Առակ նմանութեան).

Ֆաբելին ազգակից է պարաբելը (յունարէն Parabolē—նմանութիւն): Սա ևս բարոյագիտական գաղափարներ պատկերացնող ոտանաւոր է: Ֆաբելին հակառակ՝ սրա նիւթը աւելի բարձր ճշմարտութիւններ են կազմում: Մարդկանց պատկերը պարաբելում ներկայացնում և պարզաբանում է միմիայն մարդկանց միջոցով (և ոչ կենդանիների): Ամենահին պարաբել—առակները մենք գտնում ենք ս. Գրքում՝ Յիսուսի այլաբանական քարոզների մէջ: (Օրինակ՝ «Այգու մշակներ ի առակը»):

Ա Լ Լ Ե Գ Օ Ր Ի Ա.

(Այլաբանութիւն).

Ալեգորիան (յունարէն allegorein—այլ կերպ ասել կամ արտայայտել) որն է նիւթի կամ գաղափարի փոխաբերական, այլաբանական նկարագրութիւնն է: Պօէզիայում ալեգորիա է կոչւում այն բանաստեղծութիւնը, որի մէջ, սկզբից մինչև վերջը, տիրապետող ոգին փոխաբերութիւնն է, այլաբանութիւնը: (Օրինակ՝ Շիլ-

լերի «Օտար աղջիկը» ոտանաւորում գարունը այլաբանօրէն նկարագրած է ջահել աղջկայ պատկերով):

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

Բանաստեղծութեան մէջ հանելուկը մի այնպիսի փոխաբերական ոտանաւոր է, որի մէջ գծազրուում և ակնարկում է միմիայն գուշակելի առարկան կամ գաղափարը: Բանաստեղծական արուեստին պատկանում են միմիայն այն հանելուկները, որոնց մէջ ֆանտազիան և զգացմունքը աւելի գերակշռող են հանդիսանում, քան սառն միտքը, զատողութիւնը:

Բ. Տենդենցիօզ դիդակտիկ.

Այս կարգին պատկանող բանաստեղծական գրութեաների նպատակն է աշխարհիս թիւրութիւնները, անմիտ ու վատ կողմերը իրօնիայի, ծաղրի, սատիրայի և հումօրի միջոցով ներկայացնել և ուղղել: Բանաստեղծի ամբողջ և միակ նպատակը՝ այլանդակ բարքերը կրթելու մէջ է կայանում:

Ս Ա Տ Ի Ր Ա.

(Երգիծաբանութիւն).

Անունը.—Սատիրա՝ ծագում է լատինական satura բառից, որ նշանակում է՝ լի, լեցուն,

պտղաբեր. lanx satura—մի պնակ՝ պտուղներով լի, ամեն տեսակ բան.—մի այնպիսի բանաստեղծութիւն, որի բովանդակութիւնը բազմազան է, խառնուրդ է կազմում:

Իմաստք.—Հին հռոմայեցիները մօտ սատիրան կազմում էր թատերական մի ծիծաղաշարժ ներկայացում, որ տեղի էր ունենում շինական երիտասարդութեան շրջաններում, դաշտային հանդիսի (առաջին հունձի) ժամանակ: Ներկայացման բովանդակութիւնն էր՝ ուրախ երգեր, կօմիկական պատմութեան, պարեր ու սրնգի նուագածութիւն:

Ներկայումս սատիրան մի այնպիսի բանաստեղծութիւն է, որի նպատակն է խարազանել, հեզնել ու ծաղրել կեանքի վատ կողմերը, մարդկային թիւր հասկացողութիւններն ու գործերը. իրօնիայի, հեզնանքի և կատակի միջոցով նա երբեմն գովաբանում է այն, ինչ որ պէտք է պախարակէր, և դրանով աւելի ծիծաղելի է դարձնում: Նպատակն է՝ ուղղել, դատարարակել: Այս կերպ նա աւելի սուր կերպով է զգացնել տալիս մարդկային սխալները, քան այդ կարող էին անել ուսուցիչն ու քարոզիչը՝ իրենց լուրջ յանդիմանութիւններով ու խրատներով:

Սասիրիկը՝ երգիծաբանը պէտք է հմուտ լինի մարդկային ամեն տեսակ գիտութիւններին և բարոյական հասկացողութիւններին. նա պէտք է օժտուած լինի բարձր տաղանդով, իրեն հեռու

պահի չարախնդութիւնից, ստոր չարանենգութիւնից և ազնւօրէն ու սրամտութեամբ, հանճարեղ կերպով, զուարճախօսութեան միջոցով մի օրիեկտիւ պատկերի մէջ ներկայացնել կարողանայ մարդկային յիմարութիւնները, խենթութիւնները:

ՏՐԱԽԵՍՏԻԱ ԵՒ ՊԱՐՕԴԻԱ.

Դրանք նմանցումաձ, «խեղկատակ» բանաստեղծութիւններ են և մօտ նմանութիւն ունեն սատիրական գրութեան:

Տրախեսթա (խալերէն travestire—զգեստաւորել, պաճուճել, դարդարել) կոչւում է այն ոտանաւորը, որ մի լուրջ բանաստեղծութիւն փոփոխում է արտաքուստ և ներկայացնում ծիծաղելի պատկերով: Տրախեսթիան արժէք ունի միայն այն դէպքում, երբ նա երգիծաբանական է:

Պարօդիան (յունարէն par-odia—կողմնակի, երկրորդական երգ) արտաքին ձևով տրախեսթիայի հակառակն է. նա մի լուրջ բանաստեղծութեան արտաքին ձևը պահպանում է, իսկ բովանդակութիւնը միանգամայն փոփոխում և անպայման երգիծաբանական, ծիծաղելի դարձնում:

ՀՈՒՄՈՐԻՍՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հումօրիստական է կոչւում այն բանաստեղծութիւնը, որի մէջ ծաղրն ու կարեկցութիւնը,

լըջութիւնն ու կատակը, սլարգութիւնն ու թախ-
ծութիւնը միացած՝ մի ամփոփ պատկերում
ներկայացնում են հոգեկան տրամադրութեան
յոյգերը: Հումօրը իր մէջ պարունակում է տրա-
գիկական և կօմիկական էլեմենտներ: Հումօրը՝
ծիծաղ է, որի տակ հոսում են ջերմ արցունք-
ներ. բարեացակամութիւնից բխած ծաղրը այն-
քան ազնիւ է, սրտազին և սուր, որ ծաղրողի
սիրան է խոցում: Հումօրիստական բանաստեղ-
ծը պէտք է օժտուած լինի հոգեկան բարձր
ստեղծագործական յատկութիւններով, նա մարդ-
կային սխալները ընդունում է որպէս թուլու-
թիւններ և ոչ երբէք յանցագործութիւններ:

Տրագիկականը հումօրիստական բանաստեղ-
ծութեան մէջ առաջ է գալիս վշտալից զգացմուն-
քից, երբ մեծ տաղանդով է պատկերացրած
կեանքի և մարդկանց ոչ կատարեալ կողմե-
րը և մենք զգում ենք, որ ինքներս տալրում
ենք այդ ոչ կատարեալ միջավայրում ու ժա-
մանակի ցաւերից վշտանում, տանջւում ենք:

Կօմիկականը հումօրիստական բանաստեղ-
ծութեան մէջ անքակտելի կերպով միացած է
տրագիկականի հետ: Մենք ենթարկւում ենք
երկու զգացմունքին ևս միաժամանակ. մեզ տի-
րում է միաժամանակ թախիծն ու լացը, ուրա-
խութիւնն ու տխրութիւնը:

Չար իրօնիա և չար ծիծաղ չպէտք է տեղ
զանեն հումօրիստական զրուածքում: Հումօրը

գործ ունի բանաստեղծի բարձր աշխարհայեաց-
քի հետ. նա զբաղւում է հոգեկան, մտաւոր վեհ
զաղափարներով, մինչդեռ չար ծիծաղն ու իրօ-
նիան յաճախ սահմանափակւում են հասարակ,
սովորական խորհրդածութիւններով:

Հումօրը բղխում է մեծ մասամբ պետի-
ստական աշխարհայեացքից, երբ մարդ զգում
է իր շրջապատի ողորմելիութիւնը, մարդկային
մաքի թուլութիւնն ու անկարողութիւնը և սկսում
ծաղրել ամբողջ աշխարհը, ամբողջ մարդկութիւ-
նը, զրանց թւում ի հարկէ և իրեն: Նա ցոյց է
տալիս, թէ որքան փոքրիկ, չնչին է մարդը,
չնայած որ նա մեծ մտքերով, զաղափարներով է
ծանրաբեռնուած:

Գ. Բուն դիպակսիկ.

Այսպէս են կոչւում բանաստեղծութեան
այն բոլոր տեսակները, որոնց մէջ բանաստեղ-
ծը իր մտքերը, իդէաները, հրահանգներն ու
խորհուրդները արտայայտում է պարզ, անպաճոյճ
կերպով:

ԻԴԷԱԼԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԼԻՐԻԿ.

(Իդէալ-գաղ. քնարերգութիւն).

Իդէալական-քնարերգական բանաստեղծու-
թեան մէջ ցուցադրւում է մի զաղափար, մի
ճշմարտութիւն և խորհրդածութեան ենթարկ-

ւում: Իդէալական քնարերգութեանը առանձնա-
յատուկ է լեզուի սահունութիւնն ու գեղեցկու-
թիւնը, ֆանտազիայի և զգացմունքի խորութիւ-
նը. բանաստեղծը սքանչացած է վեհ իդէանե-
րով, որոնց նա պատկերացնում է գեղգեղուն
խօսքերով, միևնոյն ժամանակ, միանգամայն հա-
սարակ, սակայն բաղխիչ հատածներով ու յան-
գերով ներկայացնում: Գերմանական գրականու-
թեան մէջ Շիլլերը և Ռուքերտը համարւում
են իդէալական քնարերգութեան հիմնադիրները:
Նրանց բանաստեղծութիւնները ազդու և տալա-
ւորիչ են ջերմ զգացմունքով, հարուստ ֆան-
տազիայով և խոհուն մտքերով:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.

(Kulturhistorische Gedicht).

Կուլտուրական-պատմական բանաստեղծու-
թիւն ասելով հասկանում ենք այնպիսի մի ոտա-
նաւոր, որի մէջ մարդկանց ճակատագիրը և
զրա զարգացման, առաջխաղացութեան ընթաց-
քը, պատմութիւնը բանաստեղծօրէն պատկե-
րացրած է: Շիլլերը համարւում է զիդալտիկա-
կան բանաստեղծութեան այս ճիւղի հայրը:

ԷՊԻԳՐԱՄ.

(Վերտառութիւն).

Իմաստը.— Էպիգրամ (յունարէն epigraphein—
որևէ բանի մասին գրել) ասելով հասկացւում է

մի այնպիսի համառօտ, իմաստալից բանաստեղ-
ծութիւն, որը գրւում է նուիրաբերութեան,
յուշարձանի կամ մահուան առթիւ և կամ թատ-
րոնում արտասանելու համար: Անուններին կըց-
ւած է լինում մի ծանօթութիւն, որով արտա-
յայտւում է տաժած զգացմունքը դէպի այն
առարկան կամ անձնաւորութիւնը, որը նոյն
վայրկեանին զբաղեցնում է բանաստեղծին և որի
համար յատկապէս գրւում է ոտանաւորը: Մահ-
ուան առթիւ գրուած էպիգրամները տխուր,
էլեգիական բնաւորութիւն են կրում, իսկ որ-
պէս զեղարուեստական երկեր, էպիգրամները
յաճախ զաւեշտական են լինում: Էպիգրամները
մեծ մասամբ պատմութիւն չեն պարունակում
իրենց մէջ, այլ միայն ցոյց են տալիս, որ զրանք
յատկացրած են որոշ յիշատակի կամ նպատակի:

Տեսակները.— 1) Զգացողական էպի-
գրամ (Empfindungsepigramm), որ զբաղւում է
պատմական անձնաւորութիւններով, զանազան
դէպքերով, բնութեան երևոյթներով: Այս տե-
սակի էպիգրամները շատ հրաշալի էին Յունաս-
տանում: Գէօտէն և Հերդերը այդ մտքին գեր-
մանական գրականութեան մէջ: 2) Դիդալտի-
կական էպիգրամ, այսինքն՝ ծաղրող-ուսու-
ցանոց էպիգրամ, որ ծագած էր հին Հռոմում,
ներկայումս նաև Գերմանիայում:

Զարեշտակաւորքիւնը և զարմանալին էպի-
գրամում կայանում է նրանում, որ իդէան,

միտքը վերջում մի անսպասելի փոփոխութիւն է կրում:

Նյութականը.—Էպիգրամի նպատակն ու յատկութիւնն է՝ որոշ, զուեշտական ձևով մի հանրածանօթ օբիեկտ գովաբանել կամ պախարակել և կամ դրա մասին խորհրդածութիւն անել: (տես՝ գնօմէ): Գերմանական յայտնի էպիգրամատիկ Կլօպշտօքը (Klopstock) այսպէս է ասում էպիգրամի մասին.

«Էպիգրամն երբեմն սլաք է, խայթում է ծայրով, երբեմն նա սուր է, խրւում է ուժգին, բայց երբեմն էլ, — յոյներն էին այդպէս սիրում, — նա մի պատկեր է, նա մի ճառագայթ, որ առաքուած է ոչ միայն լուսաւորելու, այլ և այրելու»...

Էպիգրամին մօտ նմանութիւն ունին՝ պրիտմել, քսենիա և գնօմէ:

ՊՐԻՍՄԵԼ.

Պրիսմելը (լատիներէն praecambulum—նախաբան, նախերգանք) կազմուած է մի շարք կարճ նախադասութիւններից, որոնք, թւում է թէ երբէք կապ չունեն միմիանց հետ և որից մարդ չի հասկանում, թէ զբանով բանաստեղծը ինչ է ուզում ասել, մինչև որ վերջում պարզւում է մի վերջաբան-նախադասութեամբ, որը մեծ մասամբ մտքի մի անսպասելի փոփոխութիւն կրելով՝ կապակցւում է նախընթացների հետ: Օրինակ.

«Ով ցանկանում է ազուա լուանալ և դրա

վրա ջանք է գործ դնում, և արեւի տակ ձիւն հալեցնում, հողմերն տապանում փակել է ուզում, դժբախտութիւնը վաճառքի հանում, յիմարներին չունեներով կապկապում, կամ ճաղատ մարդուն ածիլել ուզում, — նա կատարում է ևսիրով... մի անպէտք աշխատանք»... (Friedrich von Spee).

ՔՍԵՆԻԱ.

Քսենիա (յունարէն xenos—օտար, հիւր, xenia —հիւրի նուէր) կոչւում են այն էպիգրամները, որոնք վերջում սուր, սատիրական բնուորութիւն են ընդունում: Հենց այդ պատճառով դրանք կոչւում են նաև «սուր, խայթող էպիգրամներ»: Հոմէական էպիգրամատիկ Մարտիալը (Martial) իր ոտանաւորների XIII գիրքը կոչել է «Քսենիաներ»: Նրանից Գէօտէն և Շիլլերը ընդունեցին այդ անունը և այդպէս անուանեցին իրենց սուր էպիգրամ-ոտանաւորները:

ԳՆՕՄԷ.

Իմաստը.—Գնօմէն (յունարէն gnome—խօսք, ասացուածք) կարճ, մի քանի բառերով արտայայտուած մի միտք է, մի ճշմարիտ խօսք, մի դարձուածք, որ գլւում է յիշատակաբաններում, այլբոմներում:

Տարբերութիւնը էպիգրամից. — էպիգրամը արտայայտում է իդէաներ, իսկ գնօմէն՝ ճշմարտութիւններ. էպիգրամը միշտ խիստ պօհաիկա-

կան ձևով է գրւում, իսկ գնօմէն՝ յաճախ և ժողովրդական տօնով. էպիգրամը յաճախ սատիրական բնաւորութիւն ունի, իսկ գնօմէն՝ երբէք:


ՊԵՏԻԿԱՅԱՆ ԷՊԻՍՏԵԼ.

Էպիստէղը (յունարէն epistole — առաքում, թուղթ, նամակ) տաղաչափական ձևով և դիգակտիկական տենդենցիայով գրուած մի նամակ է: Էպիստելը զգացմունքներ և մտքեր է արտայայտում ուսուցողական իմաստով այնպէս, որ միևնոյն ժամանակ ընդհանուր բնաւորութիւն է կրում և ամենքի կողմից հետաքրքրութեամբ կարդացւում:

ԲՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.

Բուն վարդապետական-ուսուցողական բանաստեղծութիւն կոչւում է այն ոտանաւորը, որ բանաստեղծօրէն ճշմարտութիւններ է արտայայտում պարզ, դիւրամբոնելի ձևով և որի նպատակն է սովորեցնել, ուսուցանել: Այսպիսի գրուածքում միտքը նախադասւում է զգացմունքից և ֆանտազիայից: (Օրինակ՝ Գամառ-Քաթիկոսն): Լինում են՝ փոքր և մեծ ուսուցողական բանաստեղծութիւններ: Վերջինս ոչ թէ միայն մէկ հատ լաւ ուսմունք է իր մէջ պարունակում, այլ մի ամբողջ շարք գրանցից:



66

479

ԱՌՆՆՁԻՆ ԴՐՈՇՄԱՆՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԸՆ

Վ. Տ.-Ա.Բ.Ր. «Դ ր ա մ ա տ ի կ ա կ ա ն պ օ է գ ի ա».
(Յաւել. «Թատրոն և երաժշտութիւն» հանդիսի).

Յանձնուած է *սյազրութեան*

Վ. Տ.-Ա.Բ.Ր. «Էպիկական պօէզիա».

Պատրաստ էն *սյազրութեան համար*

(Յայտար. ի գիտութիւն թարգմանիչների)

Ֆ. ՏՐԱՌԻԳՕՏ «Փիլիսոփայութեան պատմութիւն»
(սկզբից մինչև մեր օրերը), թարգ. գերմ.

Ժ. ԷՉԵԳԱՐԱ «Խեղագարութիւն թէ՞ ազնւութիւն»,
թատերգ. 3 գործ., թարգ. գերմ.

ՄՈՊԱՍՍԱՆ ԵՒ ՆՈՐՄԱՆ «Մ ու զ օ տ տ ի», թատերգ.
3 գործ., թարգմ. գերմ.

ԼԵՍՍԻՆԳ «Էմիլիա Գալօտտի», ողբերգութիւն 5 գործ.,
թարգ. գերմ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL1605481

